

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԵՐԳԸ

Խաղաղութեան ենք կարօտ

Ով իշխաններ, թագաւորներ աշխարհի,
Բաւակա՛ն է, որքան մատաղ մեր որդիք
Կըռիւներում վոհ գընացին կապարի
Կամ տուն դարձան հաշմանդամ ու վիրալիք:
Հարկաւո՛ր չեն էլ մեկ կապար ու վառօդ,
Մեր որդիներ խաղաղութեան են կարօտ:
Բաւակա՛ն է որքան մայրեր խառնեցին
Պըղտոր արցունք իրենց որդոց վարդ արեան.
Բաւակա՛ն է, որքան հարսեր թառմեցին,
Ըսպասելով փեսաների գալըստեան:
Հարկաւո՛ր չեն էլ մեկ կապար ու վառօդ,
Մայրեր, հարսեր խաղաղութեան են կարօտ:
Բաւակա՛ն է, որքան սըրտեր յուլեցին
Պատերազմի աղաղակից վայրենի,
Որքան հայրեր իրանց որդոց դաս տըվին՝
— Բարբարոս դաս,—թափել արիւն նըմանի:
Հարկաւո՛ր չեն էլ մեկ կապար ու վառօդ,
Բոլոր հայրեր խաղաղութեան են կարօտ:
Մենք չե՛նք ուզում հարըստութիւն ու ընծան,
Որ խլուած են մի այլ ազգից կործանուած.
Մենք չենք ուզում շողունք փառքի ծիածան,
Որ օտար մօր արցունքում է կամարած:
Հարկաւո՛ր չեն էլ մեկ կապար ու վառօդ
Բոլոր ազգեր խաղաղութեան են կարօտ:
Ո՛վ իշխաններ, թագաւորներ աշխարհի,
Ա՜խ, ե՞րբ մեկ հետ ձեր Գահոյքի բարձունքից
Կը քարոզէք աննենգ սըրտով և արի՝
Եղբայրութեան աւետարանը ամբիծ.
—«Անկցի՛ վրէժ, անկցի՛ն կապար ու վառօդ,
Մարդկութիւնը խաղաղութեան է կարօտ»:

ԱՐԱՄ-ՉԱՐԲԳ

(Ըստ «Սոխակ Հայաստանի» ժողովածուի: Հրատարակիչ՝ Գրիգոր ավագ քահանա Գրիգորյանց, հինգերորդ հրատարակություն, Բաքու, 1902 թ., էջ 303—304):